

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բառարարության հիմքարտական կառավագական սենատին տրուած Բառարարության հրամանը. — Հոգածարութիւն գիտասնէնեական կարիքների եւ գիտական դասակարգի մասին. — «Տեղային առանձնայացելուրինենենք». — Ա. Սահակեանի զեկուցումը Անդրկովկասում գեմստային հիմնարկութիւններ մշցնելու անհրաժեշտութեան մասին. — Դիտական դասակարգի դրութիւնը մեզանում. — Տեղական մասութիւնը բարենորոգումների հարցում. — Մի իրողութիւն, որի վրայ ուշադրութիւն դարձեց «Եակ» բերք. — Ըստացիայի և. Փրկիչ եկեղեցու կարուածների գործի ննութիւնը. — Գօջի յուշարամանի բացումը Թիֆլիսում. — Դ Սուխով-Կորլյան. — Ե բ. Մարկով. — Գ. Ռադդիկ. — Սեւ-ծովկեան երկարուղու ուղղութիւնը. — Վրաց դասասիկական ընկերութեան մրցանակը. — „Կավказան” լրագրի պաշօնական հաղորդագրութիւնը. — „Արգոնավ” «ի դաշտում. — Խուլադեանի կտակած գումարով պաստառն:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք Նիկօլայ Երկրորդ-
կայսր և Ինքնակալ համայն Ռուսաստանի, Թագավոր
Լէհաստանի, Մեծ Խլան Ֆինլանդիայի և այն և այն
և այն, յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հը-
պատակներին. Աստուծոյ նախախնամութեան հաճու-
թեամբ նախահայրերի գահը բարձրանալով՝ Մենք սըր-
բազան ուխտ արինք Ամենաբարձրեալի և Մեր խղճի ա-
ռաջ սրբութեամբ պահպանել Ռուս Տէրութեան դարա-
ւոր սիները և նուիրել Մեր կեանքը սիրեցեալ հայրե-
նիքի ծառայութեանը. Աչալուրջ հոգ տանելով մեր հը-
պատակների մասին՝ Մենք ընդունեցինք ժողովրդական
բարօրութիւնը իրադորձելու ուղիները Մեր ինքնակալ

Նախորդների և ամենից առաջ Մեր անմոռաց Ծնողի
արժանայիշատակ գործերի իմաստով։ Ամենակարող Առ-
տըծուն հաճելի էր իր անքննելի տնօրինութեամբ ընդ-
հատել վաղաժամ մահով Մեր սիրեցեալ Ծնողի կայսե-
րական աշխատութիւնները և դրանով դնել Մեզ վրայ
սրբազն պարտականութիւն լրացնելու նրա սկսած գոր-
ծը, ամրացնելու կարգը և արդարութիւնը Ռուսաց Աշ-
խարհում համապատասխան ժողովրդական կեանքի ա-
ռաջ եկող պահանջներին։ Ի մեծ վիշտ Մեր՝ խառնա-
կութիւնը, որ սերմանուած է մասամբ պետական կար-
գին թշնամի գիտաւորութիւններով, մասամբ էլ ռու-
սաց կեանքին խորթ սկզբունքներով յափշտակուելով,
խոչընդում է գառնում ժողովրդական բարօրութիւնը բա-
րուսքելու ընդհանուր գործին։ Այդ խառնակութիւնը յու-
ղելով մտքերը՝ շեղում է նրանց արդիւնարար աշխա-
տութիւնից և յաճախ կորսափի է մատնում Մեր սրտին
սիրելի և իրանց ծնողներին ու հայրենիքն անհրաժեշտ
մատաղ ոյժերը։ Պահանջելով Մեր կամքի թէ բարձր և
թէ ստորին կատարողներից հաստատուն կերպով գիմա-
գրել ժողովրդական կեանքի կանոնաւոր ընթացքի ամեն
խախտմանը և յուսալով, որ ամենքը և իւրաքանչիւրը
ազնւարար կը կատարեն իրանց ծառայական պարտքը,
Մենք անյոդդողդ վճռականութեամբ անյապաղ գոհա-
ցում տալու պետական հասունացած կարիքներին՝ բա-
րուոք համարեցինք. որ հաւատի գործերի հետ շփոռող իշ-
խանութիւնները անշեղ պահպաննեն կրօնական համեմ-
բուդութեան աւանդները, որոնք դժադրուած են Ռու-
սաց պետութեան հիմնական օրէնքների մէջ, որոնք ակ-
նածութեամբ ընդունելով ուղղափառ եկեղեցին նախա-
մեծար և տիրող, թոյլ են տալիս այլափառ և այլակրօն
գաւանութիւններին պատկանող Մեր բոլոր հպատակնե-
րին ազատ կերպով գաւանել իրանց հաւատը և կտտա-
րել նրա պաշտամունքը. շարունակել կեանքի մէջ եռամ-
գով անցկացնելու այն միջոցները, որոնք ուղղուած են
գիւղական ուղղափառ հոգեսրականութեան կալուածա-

կան գրութիւնը բարուզքելուն, ուժեղացնելով հօդեորականների արդիւնաւէտ մասնակցութիւնը իրանց հօտի հօդեոր և հասարակական կեանքի մէջ. ժողովրդական տնտեսութիւնը ամրացնելուն վերաբերեալ առաջիկայ խնդիրներին համապատասխան առաջ տանել պետական կրիդիսային հիմնարկութիւնների գործունէութիւնը, մասնաւանդ աղնւական և գիւղական կարւածական բան-կերի, որպէսզի աւելի ուժեղ կերպով ամրապնդուի և զարգանայ ոռուսաց գիւղական կեանքի հիմնական սիւների բարօրութիւնը—հողատէր աղնւականութեան և գիւղացիների. գիւղական օրէնսդրութեան վերացննութեան վերաբերեալ Մեր գծադրուած աշխատանքները, երբ նրանք Մեր մատնացոյց արած կարգով կ'իրագործուեն, որպէսզի այնուհետեւ նրանք մշակուեն և համաձայնեցնուեն տեղական առանձնայատկութիւններին, պէտք է յանձնուեն նահանգական խորհրդակցութիւններին, մերձաւոր մասնակցութեամբ արժանաւորագոյն գործիչների, որոնք վայելում են հասարակական վստահութիւն. այս աշխատանքների հիմքում դնել գիւղական կալուածատիրութեան համայնական կարգի անձեռնորդոյն գործիչների, որոնք միենոյն ժամանակ միջոցներ գիւղացներու առանձին գիւղացիների համար համայնքից գուրս դալը. ընդունել անյապազմիջոցներ վերացընելու գիւղացիներին ճնշող փոխադարձ պատասխանառւութիւնը. վերակազմել նահանգական և գաւռական վարչութիւնները, որպէսզի զեմստվային կեանքի բազմատեսակ կարիքներին անմիջապէս բաւարարութիւն տալու միջոցները ուժեղացնուեն տեղական գործողների աշխատանքներով, զեկավարուելով ուժեղ և օրինաճանաչիչնութիւնից, որ խիստ պատասխանառու կը լինի Մեր առաջ, տեղական կենցաղի բարուզքման նպատակը դնել հասարակական կառավարութեան մերժեցումը ծրիսկան հոգաբարձութիւնների գործունէութեան հետ ուղղափառ եկեղեցիներում այն տեղերում, ուր այդ հնարաւոր կը դատուի՛ Կոչելով Մեր բոլոր հաւատարիմ հըւ-

պատակներին նպաստել Մեղ հաստատելու ընտանիքի, դպրոցի և հասարակական կեանքի մէջ բարոյական սկզբ-ըունքներ, որոնց միջոցով ինքնակալ իշխանութեան հո-վանու տակ կարող են միայն զարգանալ ժողովրդական բարօրութիւնը և իւրաքանչիւրի վստահութիւնը դէսի իր իրաւունքների ամրութիւնը, Մենք հրամայում ենք Մեր մինիստրներին և առանձին մասի գլխաւոր կառա-վարիչներին, որոնց վարչութեանը վերաբերում է այս, ներկայացնել Մեղ խորհրդածութիւններ Մեր նախա-գըծումների կատարման կարգի մասին։ Տէր Ամենակալը թնդ առաքէ օրհնութիւն Մեր Արքայական աշխատանքի վրայ և թնդ օգնէ նա Մեղ՝ հայրենիքի բոլոր հաւատա-րիմ որդիների սերտ միութեամբ կատարելու Մեր խոր-հուրդները՝ կատարելագործելու պետական կարգը՝ հաս-տատելով տեղական կեանքի ամուր կազմ, իբրև գլխա-ւոր պայման Մեր Տէրութեան բարգաւաճման՝ հաւատի, օրէնքի և իշխանութեան ամուր հիմքերի վրայ։ Տրուած է Ս. Պետերբուրգում փետրուարի 26-րդ օրը, Քրիստոսի ծննդեան 1903 թւին, Մեր Թագաւորութեան իններորդ տարում։ Իսկականի վրայ նորին Կայսերական Մեծու-թեան սեփական ձեռքով ստորագրուած է՝ ՆիկոլաՅ։

Պետերբուրգի մարտի 20-ին Ռուսական Գործակալու-թեան հեռազիրք, «Հրատարակուած է Բարձրագոյն հրովարտակ կառավարիչ սենատին։ «Մշտական հողացողութիւն ունենալով Մեր ժողովրդի բարօրութեան մասին և գնալով Մեր Թագակիր նախնիների շաւիղներով, Մենք չէնք թողնում հոգսը՝ զիւղա-ցիների վիճակը բարելաւելու՝ թիթեացնելով նրանց ըն-կած հարկերի ծանրութիւնը։ Այս նպատակով՝ համաձայն Մեր տուած ցուցումներին՝ 1896 և 1899 թւերին մշակուեցին և հաստատուեցին մի շարք միջոցներ, որոնց նպատակն էր թե-թեացնել զիւղական բնակիչների ամենածանր տուրքերի հողա-բաժինների գնման պարագի հատուցումը՝ թոյլ տալով այս պարագի չը վճարուած մասը յետաձգել և վերայետաձգել։ Սրա հետ միասին ձեռնարկուեց բարեփոխել այն կարգը, որ վերա-բերում էր ժողովրդից սահմանաւոր (օկլածով) հարկերը հաւա-քելուն։ Այս կանոնը հնուց ի վեր հիմնուած էր զիւղացների

փոխադարձ պատասխանաւութեան վրայ տուրքերի վճարման վերաբերմամբ. բայց արգէն Մեր Օգոստափառ Պապը, Ալեքսանդր II Կայսրը ձևանարկեց այս սկզբունքը չափաւորելու՝ փոխադարձ պատասխանաւութիւնից գուրս հանելով սակաւ բնակչութեամբ գիւղերը: Աղատարար Թագաւորի կտակը իրագործելով Մեր 1899 թւի յունիսի 23-ի օրէնսդրութեամբ, որ գիւղային հասարակութիւնների նադելի հողերից սահմանաւոր տուրքերը ժողովելու կարգին է վերաբերում, նորից կրծատեցինք փոխադարձ պատասխանաւութեան ներգործութիւնը. որա հետ միասին Մենք նոյն ժամանակ հրամացեցինք ֆինանսների մինիստրին՝ քննութեան անել փոխադարձ պատասխանաւութիւնը բարդովին ոչնչացնելու հարցը՝ սահմանաւոր տուրքերի վճարման մէջ: Ներկայումն ֆինանսների մինիստրից այս առարկայի մասին ևնթագրութիւններ ստացուելուց և Պետական Խորհրդում քննուելուց յետոյ Մենք բարուոք համարեցինք համաձայն ներկայ թւականի վերուարի 26-ին Մեր տուած հրովարտակում արտայայտուած Մեր կամքին՝ վերացնել այն օրէնքները, որոնցով սահմանուում է տուրքերը վճարած գիւղացիների պատասխանաւութիւնը չը վճարածների համար, և գործադրութեան համար հաստատել նոր կանոններ, որ ամսն մէկը վճարէ իրանից պահանջուող սահմանաւոր տուրքերը: Այս պատճառով և հաստատ համոզուած լինելով, որ նոր օրէնքով գիւղացիներին չնորհուած թեթևութիւնները կը նպաստեն աւելի ևս պահպանելու նրանց բարօրութիւնը՝ հրամայում ենք—այն տեղերում, ուր մոցրուած է 1899 թւի յունիսի 23-ին Բարձրագոյն հաստատուած օրէնսդրութիւնը, որ վերաբերում է գիւղացին հասարակութիւնների նադելի հողերից սահմանաւոր տուրքերը ժողովելուն, վերացնել գիւղացիների փոխադարձ պատասխանաւութիւնը՝ սահմանաւոր պետական, հողային և համայնական հարկերը ժողովելիս՝ այն հիմքերի վրայ, որոնք Մեղանից այսօր հաստատուած են և Պետական Խորհրդից սահմանուած:

Վերջին տասը-քսան տարիների ընթացքում ոռւսական արդիւնագործութիւնը գանելով կառավարութեան կողմից չափանց հովանաւորումն, հաճեց վիթխարի թափովի վեաս երկրուի գիւղատնտեսական արդիւնաբերութեան ընդհանրապէս և գիւղական մասսայի բարօրութեան մասնաւրապէս:

Գիւղատնտեսութեան և գիւղացիների վատթարացած դրութիւնը իր վրայ դարձեց Բարձրագոյն իշխանութեան առանձին ուշադրութիւնը:

Ինչպէս զիտեն մեր ընթերցողները, անցեալ աւարի թաղաւոր Կայսրը բարեհածել էր նշանակել Առանձին Խոր՝ բդակցութիւն զիւղատնտեսական կարիքների քննութեան համար։ Մենք արդէն որոշ զաղափար տուել ենք մեր ընթերցողներին՝ հարցերը պարզելու այն նոր ուղղութեան մասին, որ բարերար հետեանքներ պէտք է ունենայ իրերի ճշմարիտ դրութիւնը իւմանալու համար։

Դէպի զիւղատնտեսութիւնը և զիւղական գասակարգը ցոյց առւած Բարձրագոյն հոգատարութիւնը մնձ ուժով արտայայտուեց և վիետուարի 26-ին հրատարակուած Բարձրագոյն հրովարտակի մէջ, որին յաջորդեց մարտի 20-ին կառավարչական Սենատին արտած Բարձրագոյն հրամանը։ Այդ երկու նշանաւոր պետական կարգադրութիւնները առաջ են բերուած այս աեսութեան սկզբում։

Բարձրագոյն հրովարտակում նախագծած բեֆօրմները և Սենատին արտած Բարձրագոյն հրամանը երկրի զիւղական գասակարգի դրութեան մէջ ահազին փոփոխութիւններ պէտք է մտցնեն։ Եւ եթէ ի նկատի ունենանք Բարձրագոյն հրովարտակում յիշուած թէ նահանգային ու գտառական կառավարչութեան մէջ լինելիք բարենորոգումները ապակենարօնացման ուղղութեամբ և թէ օրէնսդրութեան վերաբննութեան աշխատանքների մէջ նաև տեղական գործիչների մասնակցութիւնը, ինչպէս և տեղային առանձնայատկութիւնների վրայ չիշտած Բարձրագոյն խօսքերը—պէտք է մեր ներկան համարենք մի նշանաւոր պատմական մօմենտ, երբ նոր ձևակերպութիւն են ստանալու ազգաբնակութեան ահազին մեծամասնութեան կեանքի հիմքերը խորապէս չօշափող օրէնսդրական վերանորոգումները։

Յիշուած «Պեղային առանձնայատկութիւններով» Ռուսաստանի մէջ ամենից շատ հարուստ է մեր Անդրկովկասը։ Քանի որ խօսքը զիւղական գասակարգի մասին է, պատեհ ժամանակ է նկատել, որ մեր զիւղացիները մինչև այժմ էլ գտնուած են իրաւական մի քանի այնպիսի յարաբերութիւնների մէջ, որոնք վաղուց վերացուած են Եւրոպական Ռուսաստանում։ Հէնց, օրինակի համար, վերցրէք կալուածատէրերի հողերի վրայ ապրող զիւղացիների դրութիւնը, մինչդեռ ներքին նահանգներում կառավարութեան օգնութեամբ զիւղացիները կարողացան կալուածատէրերից յետ գնել իրանց հողաբաժնները, մեղանում բէգերը, խանները, իշխանները և այլն շարունակում են վայելել զիւղացիների մշակած հողաբաժնների վերաբերմամբ նախկին ոռու կալուածատէրերի արտօնութիւնները։ Այդ մասին տեղական մամուլը բարձիցս խօսել է, առիթ ևնք ունեցել

նոյն այս էջերում գիտողութիւնները անել և մենք *), սակայն այն ժամանակ յարմար վայրկեանը չէր հասել, որ իշխանութիւնը ի նկատի առնէր մեր այդ տեղային առանձնայատկութիւնները: Այժմ երբ բարձրագոյն իշխանութեան ուշադրութիւնը ըզբաղուած է գիւղատնտեսութեան և գիւղական գասակարգին վերաբերեալ հարցերով,—անշուշտ այլ հետեւանքներ կ'ունենան իրերի դրութիւնը պարզաբանող բազմակողմանի հետազօտութիւնները և զեկուցումները:

Մենք արդէն տեսանք, թէ ինչ լրջութեամբ կովկասեան Գիւղ Ընկերութեան մէջ քննւում էին երկրի գիւղատնտեսութեան բարւորման հետ սերտ կապուած զանազան հարցեր: Այդ Ընկերութեան մէջ կատարուած մի չարք գեկուցումներին աւելացաւ և պ. Ա. Սահակեանի զեկուցումը՝ Անդրկովկասում զեմստվային հիմնարկութիւններ ստցնելու անհրաժեշտութեան մասին: Ճիշտ է, այդ հարցը նոր չէր զնուում մեզանում: ուրիշ ընկերութիւններ ևս, ինչպէս և մամուլը **), տարիներ շարունակ արձարծել են այդ կարենոր հարցը: Սակայն այժմ, երբ Առանձին Խորհրդակցութիւնը ինքը եր գիմումներով հնարաւորութիւն է տալիս տեղային հիմնարկութիւններին աղատ արտայատելու իրանց կարծիքները և ցանկութիւնները, համականակի է՝ որ ուրոյն նշանակութիւն է ստանում Ընկերութեան միաձայն հաւանութեւնը գտած մի լուրջ, փաստալի զեկուցում, ինչպիսին էր պ. Սահակեանի կարդացածը:

«Միայն երկրի հետ օրգանապէս կապուած, իրանց միջավայրի բոլոր կարիք ները անմիջապէս ճանաչող անձինք երկրի տնտեսութիւնը հրապարակապէս և ազատ քննելու պայմանում, ընդունակ են դնել զիւղատնտեսական արդիւնաբերութեան զարգացումը պատշաճ բարձրութեան վրայ,—ասաց զեկուցողը: Միայն զեմստվօն կարող է միացնել յանուն երկրի ընդհանուր բարօրութեան բոլոր գասակարգերը և ազգութիւնները, միայն նա կարող է յարուցել նախաձեռնութեան ողին, բանալ ինտելիգենս ոյժերի համար զործունէութեան լայն ասպարէզ: Գիւղատնտեսական արդիւնաբերութիւնը իր բազմատեսակ կարիքներով չի սեղմուում բիւրօկրատիական կառավարման նեղ ըրջանակներում, և ամեն մի վարչական սիստեմ անզօր է ժողովրդական տնտեսութիւնը բարձրացնելու գործում, երբ այդ

*) Տես «Մուրճ» 1901 թ., № 3.

**) Կ միջի այլոց տես նաև «Մշակ» (1899 թ., № 184) «Մեր իրականութիւնը» յօդուածի եղբակացութիւնները:

վարչութիւնը իր մէջ միացնում է երկու բարդ և իրար օտար փունկցիաներ» ^{**}):

Ժողովին նախագահող Ն. Ա. Առլուան-Կրըմ-Դիրէլը իրան յատուկ տակտով և լայն հանդուրժանութեամբ զեկավարում էր վիճաբանութիւնները և լսում թերու դէմ կարծիքները, բոլոր առարկութիւնները, որ անւում են և կարող են անուել, քննութեան ենթարկուեցին և ջրուեցին անհերքելի փաստերով, ուստի ժողովը միաձայն որոշեց ընդունել այդ զեկուցումը և, մի քանի կէտեր լրացնելով, առաջարկել ուր հարկն է: Պէտք է յուսալ, որ նոյն եռանդով ու լրջութեամբ ընկերութիւնը կը վերաբերուի և Անդրկովկասի գիւղացիների բազմաթիւ առանձնայատուկ ցաւերին և բաց չի թողնի պատեհ առիթը բազմակողմանի զեկուցումներ նուիրելու նոր հերթական հարցերի մասին:

Տեղական առանձնայատկութիւնները անշուշտ կարող են երեան հանել նաև տեղական լեզուներով հրատարակուող թերթերը, որոնց շուտով աւելանալու է և թրքական «Շարքի Ռուսակագիր»: Բայց չի կարելի մատնանիշ չանել մի ցաւալի իրողութեան վրայ. այդ այն է, որ ոռուսաց լեզուով լոյս աեսնող տեղական թերթերը քիչ են հետեւում տեղական լեզուներով հրատարակուող թերթերին: Ցանկալի է, որ աւելի սիստեմատիկ և սերտ կապ հաստատուէր տեղական բոլոր լեզուներով լոյս տեսնող թերթերի մէջ, այն ժամանակ աւելի լիակատար արտայացաւութիւն կը գտնեն: մեր կեանքի բազմաթիւ ցաւերը, այն ժամանակ տեղական ոռուսաց լեզուով լոյս աեսնող հրատարակութիւնների միջնորդութեամբ ընդհանուր ոռուսաց մամուլը աւելի լիակատար և ճշշտ կերպով կը ճանաչի մեր երկիրը, մեր պահանջները և մեր ցաւերը: Ինչո՞ւ մայրաքազարների մամուլը իր սրտին մօտ չը պէտք է վերցնի նաև Անդրկովկասի խուլ անկիւններում կատարուած նշանաւոր դէպեքերը, միայն թէ հարկառը, է որ այդ գէպքերի մասին ճշգրիտ տեղեկութիւններ համանեն նրանց: Մեր այդ ասածը հաստատուած է, օրինակ, Զանգեզուրքի մի խուլ անկիւննում պատճաճ գէպքով, որ նկարագրուելով „Բակу“ ^{*)} լրագրում ապա քննութեան առարկայ զարձաւ: և „ԽօօՍՏԻ“-ի մէջ, գուցէ նաև այլ թերթերում, որոնք չեն անցել մեր ձեռքը:

«Люди въ снѣгъ» (մարդիկ ձիւնի մէջ) յօդուածում նկարագրուած էր Ցաւ գիւղի ընակիչների զլիին հասած մի ցաւ:

^{*)} „Կավկ. Сельск. Խօз“ № 475.

^{**) № № 48, 51.}

Բանից գուրս է գալիս, որ 314 մարդուց բաղկացած մի ամբողջ գեւզ իր մեծ ու փոքրով և իր տնային անառուններով ամբողջ այս ձմեռ անց է կացրել օսրերի անտառներում, բաց երկնքի տակ, սառնամնիքի ու բուքի մասնուած, ձիւնի մէջ, վայրի գաղանների նման, որովհետ մի թիւրիմացութեան չնորհիւ գանձարանի տեղական պաշտօնեանները կողպել են և կնքել նրանց տների գոնքերը: 12 տարի առաջ այդ ցաւեցիք ապրում էին Քիւրզիքենդ և Գերջանան գիւղերում, ձմեռը իջնում էին և զետիք ամառ-ձմեռ հաստատուել յիշած բէզի հողերի վրայ: Բէզը համաձայնում է, զիւղացինները ծախում են Քիւրզիքենդում և Գերջանանում իրանց տուն-տեղը և գաղթում ու հաստատում իրանց այժմեան Յաւ գիւղում, որ 12 տարի չարունակ նրանց ձմեռանոցն է եղել: Գիւղացինները չեն իմանում, որ այդ հողը վէճի մէջ է գանձարանի հետ: Դատարանը 1901 թ. վէճը վրձնում է գանձարանի օգտին Եթէ զիւղացինները այնքան տղէտ և իրաւարանական կողմից այնքան անօդնական չը լինէին, ի հարկէ՝ կը դառնային արքունական զիւղացիններ կամ, մինչև այդ հարցը լուծելը, իրանց մշակած հողերի կապալառուններ կը մընալին: Սակայն այդ միամիտները, իրաւարանական ձևերին անտեղեակ լինելով, չը կարողացան ժամանակին ոչ այս և ոչ այն անել: Գանձարանը առաջարկեց զրանց հեռանալ և յանձնել իրանց հողերը երկու անտառապահնների, որոնք գանձարանի կապալառուններն էին դառնել: Գիւղացինները դիմուցին երկրագործութեան մինհասարին խնդիրքով և միամտարար կարծում էին, թէ այսօր-վաղը կը լուծուի հարցը, ուստի ժամանակաւրապէս մօտիկ սարերում տեղաւորուել սպասում էին: Վ. Րայ հասաւ ձըմեռը, ցրափ հիւանդանում էին և մեսնում թէ մարդիկ և թէ անտառնները: Անցաւ և ձմեռը... Գիւղացիններից մէկը «ՀՈՎՈԾԻ» թերթի խմբագրատան պատմել է այդ գժրազդ դէսքի մանրամասնութիւնները և աւելացրել: «Վրայ է համուռմ մարդկանց համար մեծ տօնը, իսկ մեզ համար զեռ պաս է և կոծ: Բոլորը, նոյնիսկ տաժանակիր աշխատանքների մատնուած յանցաւորներն, ապաստան ունեն, միայն մենք ենք զուրկ դրանից»:

Բնականաբար Եթէ նոյն գժրազդութիւնը պատահէր մի ուներ և դատաստանական ծակ ու ծուկերին հմուտ անհատի, նա կը գտնէր մեղանում շատ երեսելի վաստարաններ իր գատը պաշտպաններու կամ պահանջուած ձեռով դիմումներ անելու հա-

մար: Բանը փոխւումէ, երբ տուժող կօղմը մի տղէտ, միամիտ և աղքատ զիւղական համայնք է լինում:

Քանի որ դատաստանական վէճի մասին էր խօսքը, ի դէպ է այստեղ յիշատակել նաև մարտի 24-ին դատաստանական պալատում նշանակուած Ախալցիայի ո. Փրկիչ եկեղեցու ընդարձակ կալուածների գործի քննութեան մասին, ինչպէս յայտնի է, համաձայն 1898 թ. մարտի 26-ին Բարձրագոյն հրամանի՝ Կովկասեան ուսումնարանական շրջանի վարչութիւնը զըրաւել էր յիշեալ կալուածները, որոնց արժողութիւնը գնահատուում է մօտ 400 հազար բուրլի: Թիֆլիսի նահանգական դատարանը քննելով գործը՝ ճանաչել էր հայոց եկեղեցու սեփականութեան իրաւունքը: Սակայն ուսումնարանական շրջանի հոգաբարձուն գործը անց էր կացրել դատաստանական պալատը, ուր և պէտք է քննուէր այս ինչպէս հազորդում է «Մշակը», «Թիֆլիսի դատաստանական պալատի նիստում» նախագահը յայտնեց, որ ժողովքական լուսաւորութեան մինիստր Զենգերից ստացուել է հետագիր, որով պ. մինիստրը խնդրում է պարագաներ յետաձել Ախալցիայի սուրբ Փրկիչ եկեղեցու կալուածների գործի քննութիւնը, որովհետեւ Պետերբուրգից դալու է մինիստրութեան իւրիսիօնսուլտը՝ ուսումնարանական վարչութեան շահերը պալատում պաշտպանելու համար: Երդուեալ հաւատարմատար Ս. Մելիք-Աղամեան յայտնեց պալատին, որ ուսումնարանական վարչութիւնը ժամանակին ստացած լինելով պալատի ծանուցագիրը գործի քննութեան մասին, բաւական ժամանակամիջոց ունէր իր շահերի պաշտպանութիւնը յանձնելու ուն որ ցանկանար, իսկ եթէ այդ ժամանակին էլ բաւական չը համարուի; նա համաձայն է գործի քննութիւնը յետաձգելու, ոչ աւելի քան մի ամիս ժամանակով: Պալատը որոշեց գործի քննութիւնը յետաձել մինչև մայիսի 2-ը»:

Մարտի 19-ին Թիֆլիսի Ալէքսանդրեան այգում բացուեց Գօգոլի յուշարձանը, որ կանգնեցրել է քաղաքային վարչութիւնը: Այդ հանդիսին ներկայ դանուելով՝ մենք մտածում էնք, թէ արդեօք կարող էր «Քեվիզօր»-ի հանձարեղ հեղինակը երեակայել, որ գալու է մի օր, երբ իր արձանի մօտով անցնելու են ասիացի համբարները, պատկառանքով խոնարհելով նրա զրչի ոյժի առաջ հրանց միջնադարեան խորհրդաւոր զրօշակները: Ի՞նչպէս ամեն բան փոխում է լուսնի տակ. մի ժամանակ պէտք է Նիկողայոս Լ-ի հզօր կամքը ստիւէր թոյլ տալ բեմի վրայ ներկայացնելու մեծ երգիծարանի անմահ ստեղծագործութիւնը, իսկ ալժմ այդ զրուածքը մատաղ սերնդի միաքը

կրթող և հոգին դաստիարակող կլասսիկ գրուածք է համարւում...
Այդպէս ահա անցողական են կեղծիքի և երկիւղի ստեղծած
արդելքները...

Անկասկած շատ աւելի փոքր էր ներկայումս, Ֆրանսիայում,
84 տարեկան հասակում վախճանուած Սուխօվօ-Կօրըլինի տա-
ղանդը, որ արտայայտուեց նրա մի հատիկ նշանաւոր բեմա-
կան գրուածքի՝ «Կրեչինսկու հարսանիք»-ի մէջ։ Ճիշտ է, Սու-
խօվօ-Կօրըլինը ունի նաև «Փորձ», «Ժարելկինի մահը» անու-
նով պիէսներ, սակայն նրա ամբողջ հոչակը հիմնուած է «Свадь-
ба Кречинского» կօմեդիայի վրայ, որը 50 տարի շարունակ
ներկայացնուելով բեմի վրայ՝ չի կորցնում իր թարմութիւնը,
որովհետեւ Շասզլիւերի և Կրեչինսկու տիպերը նկարագրուած
են գօղօլեան հու մորով և կենդանութեամբ։

Այլ տիպի գրող էր մօտ 62 տարիքում վախճանուած
Ե. Մարկօվը, որ շատ բազմակողմանի դործունէութիւն էր ու-
նեցել, մասնագիտութեամբ բնագէտ եւգենի Մարկօվը նախ
գործում էր մանկավարժական ասպարիգում իբրև ուսուցիչ,
տեսուչ, վերատեսուչ, սակայն 1870 թւականից նա թողնում է
մանկավարժութիւնը և նուիրուում գրականութեան։ Այդտեղ
նա կանգ չէ տոնում որոշ ճիւղի վրայ, այլ տալիս է և բելլե-
տրիստիկական, և քննադատական, և հրապարակախօսական գը-
րուածքներ, սիրում է ճանապարհորդել և նկարագրել իր տե-
սածները, ի միջի այլոց նա լաւ յայտնի է կովկասցիներին,
որովհետեւ մի քանի անգամ ճանապարհորդել է մեր երկրում,
ունի կովկասի և Հայաստանի մասին տպած հետաքրքրական
աշխատութիւններ։ Այդ գրուածքներով ոռւս ժողովուրդը կա-
րող է ծանօթանալ մեր երկրի հետ, նոյնիսկ սիրել մեզ։

Կովկասի բնապատմական ուսումնասիրութեան զարկ
տուողը այդ կամ մի ուրիշ ոռւս բնագէտ չէր, այլ Պրուսիա-
յում ծնուած և միջին կրթութիւն ստացած մի գերմանացի,
որ իր եռանդով և տոկունութեամբ կարողացաւ գիտութեան
մեծ ծառայութիւն մատուցանել։ Մեր խօսքը մարտի 2-ին
թիգիսում վախճանուած Գուստավ Բադեկի մասին է, որ
1863 թւականից սկսած իրան նուիրել էր Կովկասի ֆլորայի և
ֆաունայի ուսումնասիրութեան։ Այդ նշանաւոր գերմանացու
չորհիւ, է որ Կովկասը ունի իր միակ մուգէօնը, որ իր բոլոր
պակասութիւններով հանդերձ կարող է նպաստել մեր երկրի
բնապատմական և ազգագրական առանձնայատկութիւնների
ուսումնասիրութեան։

Լ. Ա.

Լրագրները հետեւեալ տեղեկութիւններն են հազորդում
Սե-ծովեան երկաթուղու շինութեան հարցի մասին. ֆինանսնե-
րի մինիստրութեան մէջ կազմուած առանձին մասնաժողովը
երկաթուղային գործերի գեղարքամենտի կառավարիչ ջիգ-
լեր Ֆօն-Շաֆ-Հառլենի նախագահութեամբ քննեց և վճռեց
Սե-ծովեան երկաթուղու շինութեան հարցը. երկաթուղային
այդ նոր զիծը, որի շինութիւնը յանձն է առնում Վլադիկավ-
կազի երկաթուղու ընկերութիւնը, կը միացնէ այդ զիծը Ան-
դրբեկվասեան երկաթուղու հետ. Սկսուելով Խօփ-Սենակի
կայարանից՝ նա կ'անցնէ գէտի Սուբաւմ, որ գտնուում է Սե-ծո-
վի ափին և այս կէտից շարունակ կը գնայ Սե-ծովի ափով
մինչեւ Տուապսէ. Ապա նոր զիծը կ'ընդունէ հիւսիս-արևելեան
ուղղութիւն և Կուրանի վտակներից մէկի հովտով կը հասնէ
Վլադիկավկազեան երկաթուղու Արմաւիր կայարանը. Սե-
ծովեան ապացայ երկաթուղին անցնելով այս ուղղութեամբ՝
իր հարաւային մասում կը նպաստէ ոռւսական Ռիվիերայի և
ոռւսական Նիցցայի՝ Սօչիի ծաղկելուն, իսկ հիւսիսային մասում
նա կը կենդանացնէ հարաւային Ռուսաստանի աւենաբարերեր
շրջաններից մէկը:

Վրաց գրամատիկական ընկերութեան կօմիտեալը 300, 200
և 100 բուրլու մրցանակներ է նշանակել վրացերէն լեզուով
գրուած գրամատիկական ինքնուրոյն լաւագոյն գրուածքների
համար. Բացի սրանից՝ կօմիտեալը որոշել է 50/0 յատկացնել մըր-
ցանակ ստացած գրուածքների հեղինակներին այն ներկայացում-
ների ընդհանուր մուտքից, երբ կը խաղացուեն նրանց պիեսնե-
րը. Գրուածքները պէտք է ներկայացուեն կօմիտեալին մինչեւ
այս տարուայ սեպտեմբերի 30-ը:

«Կավկազ» լրագրում տպուած են հետեւեալ կառավարչական
հազորդագրութիւնները. «Բաթում քաղաքում մարտի 9-ին
տուաօտեան, բանուորների մի մեծ խումբ հաւաքուեց կայարա-
նում գնացքի ուղերուելու ժամանակի, որպէս զի ճանապարհ
գնէ դատաստանի ենթարկուած բանուորներին պաշտպանող
փաստաբաններին: Երբ գնացքը շարժուեց, ամրոխը կարմիր
դրօշակ պարզելով ռուռայից աղաղակներով սկսեց գնալ գնաց-
քի ետեից երկաթուղային գծի վրայով:

Դժբախտ գէպերից խոյս տալու համար՝ մեքենավարը
կանգնեցրեց գնացքը, որ ապա շարունակեց ճանապարհը մի
քանի բռնէցից յետոյ, երբ ամրոխը հեռացաւ գծի վրայից:

Կայարանից ամբոխը պարզելով էլի մի քանի գրօշակներ

հակառակարչական մակագրութիւններով՝ սկսեց առաջ գը-
նալ Մարինակի պրօսպէկտով, որտեղ մի քանի անգամ ատըր-
ճանակ արձակեց առանց որեւէ վեաս պատճառելու, «Պերնոր-
սկի ՅԵՍՏԱԿԵ» լրազրի խմբագրութեան, պ. Էրնի և ամերե-
կական հիւպատոսի բնակարանների պատռհանի ապակինները
ջարդեց:

Դրանից յետոյ ամբոխը տեսնելով մօտեցող զօրախումբը՝
յըռեց:

«Բագու քաղաքում, այս մարտ ամսի 2-ին՝ կէսօրուայ ժա-
մի 12-ին Մարինակի պարտէզի մօտ սկսեց հաւաքուել ժողովը՝
զի բազմութիւն, որը աղաղակներով ուղերուեց դէպի պարա-
պետ՝ ճանապարհին մեծ քանակութեամբ հակառակարչական
բովանդակութիւն ունեցող պրօկլամացիաներ ցրելով. նոյն-
պիսի պրօկլամացիաներ դուրս էին զցւում մի քանի աների
պատռհաններից: Ամբոխի մի մասը աջողուեց ցրել ոստիկա-
նութեան միջոցով և կօգակների օգնութեամբ, իսկ մի մասը
հասաւ Մարինակի պարտէզին և միացաւ այնտեղ զանուող ցու-
ցարարների հետ: Այստեղ բացի աղաղակներից և պրօկլամա-
ցիաներ ցրելուց՝ ամբոխը քարեր էր նետում ոստիկանների
և կօգակների վրայ, ապա հաղածուելով նրանցից՝ շարժուեց
Մարինակի փողոցով դէպի Պետրօվմկի հրապարակը: Մարինա-
կի փողոցում ամբոխի մէջ մի բոպէ երեաց կարմիր զրօշակ:

Ամբոխի մի ուրիշ խումբ Կրամանօգուտսկայեա և Մերկու-
րիեսկայեա փողոցների անկիւնից ուղերուեց դէպի Սօլդատ-
ուսկի Բազարը: Սակայն այնտեղ զանուող կօգակների հարիւրեա-
կի հրամանատարի ձեռք առած միջոցներով աջողուեց ցրել
այդ ամբոխը. այդ ժամանակ մի քանի անձինք ներս քշուեցին
Շովագնացների ուսումնարանի գաւիթը և այնտեղ ձերբակա-
լուեցին: Ամբոխից զցուած մի քար թեթև կերպով վիրաւորեց
կօգակներից մէկի գլուխը: Բագուի նահանգապետի բացակա-
յութեան պատճառով նրա պաշտօնը վարող Բագուի փոխնա-
հանգապետ Լիլէն դիմեց դէպի ամբոխը և հանդիպելով նրա
մի մասին Բարեատինսկայեա փողոցում, առաջարկեց նրան ցը-
րուել, որեւ կատարուեց: Այդ ժամանակ Մարինակի փողոցի վրայ
երեաց մի այլ ամբոխ Շտապելով նրա մօտ՝ փոխնահանգապետ
Լիլէն լսեց զնդականարութեան երկու հարուածի ձայն, որ գա-
լիս էր Պետրօվմկի հրապարակի կողմից: Դուրս գալով կառ-
քից՝ փոխնահանգապետը ուղերուեց յիշուած հրապարակը և
սկսեց համոզել ամբոխին, որ գագարեցնէ անկարդութիւնները՝

Այդ ժամանակի փոխ-նահանգապետ Լիլիք թեթև վէրքեր ստացաւ զլիխն և ձեռքին:

Երբ բժիշկները մօտակայ մասնաւոր տներից մէկում կապեցին նրա վէրքերը, Լիլիքը նորից շարունակեց պտառել կառքով քաղաքի մէջ և կարգադրութիւններ անել անկարգութիւնները դադարեցնելու վերաբերմամբ:

Ժամի 2-ին կէսօրից յետոյ ամեն ինչ հանգստացաւ:

Նոյն օրը ժամի 5-ին երեկոյեան Բաղախանիում ամբախը՝ բաղկացած մօտ 2000 մարդուց, հաւաքուեց Վօլշինսկի նաւթահանքի մօտ, սկսեց աղաղակել, աղմուկ բարձրացնել, բայց ոստիկանապետը համոզեց նրան ցրուել և երեկոյեան եօթներորդ ժամին ամեն ինչ հանգստացաւ:

Բագու քաղաքում անկարգութիւնների ժամանակ ձերբակալուցին 21 հոգի, որոնցից 18-ը փոխ-նահանգապետի կարգադրութեամբ պետական պաշտպանութեան օրէնքների հիման վրայ ենթարկուեցին բանտարկութեան Բաղուի բանտում, իսկ երեքը՝ երկու րէալիստ և Միքայէլեան քաղաքային ուսումնարանի մի աշակերտ՝ յանձնուեցին ուսումնարանական վարչութեան ձեռքը»:

«Կավազ» լրագրում կարգում ենք. «Կիրակի, փետրուարի 23-ին, առաւտեան ժամի 10-ից, մեծ բազմութեամբ ժողովուրդ (գլխաւորապէս գործարանական և անդրկովկասեան երկաթուղու բանուորներ) սկսեց հաւաքուել Գոլօվինսկի պրօսպէկտի գինուորական մայր եկեղեցու մօտ և մերձակայ փողոցների վրայ Հաւաքուողներից շատերը ձևուներին ունէին հաստ և ծանր հունի փայտեր: Թիֆլիսի քաղաքային ոստիկանութեան անընդհատ առաջարկութիւնների պատճառով՝ ցրուելու և կանդ չ'առնելու փողոցներում, այդ անձինք, որոնք յամառութեամբ ձգտում էին կանգնել մի տեղում, չը կարողացան խմբեր կադմել քաղաքի գլխաւոր փողոցներում: Այսուամենայնիւ ցերեկուայ 12 ժամին մօտ 60—70 հոգի կամենսալով անպատճառ անկարգութիւններ անել և նկատելով կալուածատէր Փալուանդովի բաւականացնելու վաւական բարձրացմարդ յուղարկաւորութիւնը, որ Պուշկինեան փողոցից ծոռւեց դէպի Միջին փողոց, թափուեցին այդ փողոցը Տէր-Ասատուրօվի քարվանսարայի միջով և շրջապատելով՝ յուղարկաւորութեան գնացքը՝ «ուռա» աղաղակելով կոխւ և անկարգութիւններ սկսեցին անել: Ցոյց անողներից մէկը 4 անգամ ատրճանակ արձակեց, իսկ մնացածները սկսեցին ծեծել անխստիր փողոցում գտնուող բոլոր անձերին: Երկու օֆիցիեր, որոնք իրեն ծանօթ մասնակցում էին Փալավանդօվի յաղարկա-

ւորութեան, մի շարք վէրքեր ստացան, գլխաւորապէս զլուխ-ներին, իսկ նրանցից մէկը վիրաւորուեց գնդակով, որ և մաց վերարկուի մէջ: Մերձակայ բուժարանում վէրքերը կապելուց յետոյ վիրաւորուածները ուղարկուեցին զինուորական հիւան-դանոցը բժշկուելու: Բարեբախտաբար երևաց, որ այդ օֆիցեր-ների վէրքերը վտանդ չեն սպառնում նրանց կեանքին: Նոյն տեղում գտնուող ոստիկանների մի խումբ կօզակների օգնու-թեամբ մի քանի բողէում ցրեց ցոյց անողներին: Ատրճանակ արձակուլը, չը նայելով իր համախնների փորձերին աղատելու նրան ոստիկանների ձեռքից՝ ձերբակալուեց անկարգութեան միւս նախաձեռնողների հետ միասին: Զերբակալուած ցոյց ա-նողների ընդհանուր թւից 24 հոդի, անկախ այն պատասխա-նատութիւնից, որին պէտք է ենթարկուեն նրանցից մի քա-նիսր հասցրած վէրքերի պատճառով, Կովկասեան կառավարչա-պետի հրատարակած պարտադիր կանոնների հիման վրայ, — հա-սարակական կարդը խանդարելու նպատակով ժողովներ կազմե-լու և ոստիկանութեան պահանջը չը կատարելու համար, — են-թարկուած են թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ իրանց յանցանքի աստիճանին համեմատ բանտարկութեան, սկսած մի շաբաթից մինչև 3 ամիս: Ոստիկանութեան պաշտօ-նեաներից, նոյնպէս և ցոյց անողներից ոչ ոք լուրջ վնասներ չը ստացաւ:

«Արգոնավտ» լրագրի խմբագրութիւնը յայտնում, է թէ «որովհետեւ Ռ. Ա. Յովհաննիսեան չէ հաստատուած ժամանա-կաւոր խմբագրի պաշտօնի մէջ, ուստի «Արգոնավտ» շաբաթա-թերթը հրատարակութիւնը ժամանակաւորապէս դադարեցնուում է մինչև նոր խմբագրի հաստատութիւնը: «Արգոնավտ»-ի բա-ժանորդները բաւարարութիւն կը ստանան հրատարակութիւնը վերականգնեցնելուց յետոյ, իսկ բաժանորդներից այն անձինք, որոնք չեն ցանկանալ սպասել լրագրի լոյս տեսնելուն՝ կարող են ան-դորրագիրը ներկայացնելուց յետոյ յետ ստանալ վճարած դրամը ստորագրութեան հաշուում:

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ստացել է արդէն կովկասեան կառավարչութիւնից կարեոր թոյլտութիւ-նը բանալու որբ փոքրահասակ աղջիկների ապաստարան Խու-դադեանի կտակած գումարով: Ապաստարանը, որի պահպանու-թեան նախահաշիւր կ'որոշուի այս մարտ ամսի 23-ին տեղի ունենալիք ընկերութեան ընդհանուր ժողովում, հաւանականա-բար կը բացուի այս տարուայ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսնե-րին և սկզբում իր մէջ կը պատասխարէ 20—30 որբ աղջիկների: